1989

№ 281 (9602)

ՀԻՆԳՇԱԲԹԻ

5

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

Հրատարակվում է 1957 թ. հոկտեմբերի 1-ից

ԳԻՆԸ՝ 8 ԿՈՊ.

ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՐԿԱԴԻՐ ՄՈՐԹ

Երկաթուղու՝ մեր «ինտերնացիոնալիստ» հարևանների կազմակերպած արդեն ամսից ավելի տևող շրջափակումը դժվարին կացության մեջ է դրել հատկապես թոչնապահներին։ Խարբերդի թոչնաբուծական ֆաբրիկայում ծանր իրավիճակ է ստեղծվել։ Այստեղ ստացվող համակցված կերերի բաղադրությունը արդեն երկար ժամանակ հնարավոր չէ ապահովել, որի պատճառով համատարած փետրափոխություն է սկսվել մայր թոչունների մոտ։ Դա անդրադարձել է նաև ձվատվության վրա։ Ֆաբրիկան, որը նախկինում օրական առևտրական կազմակերպություններին էր ուղարկում 82—83 հազար ձու, ձվի արտադրության ծավալը կրկնակի կրճատել է։ Մեծ թիվ են կազմում անկումները (օրական 1000—1100 թոչուն)։

Համակցված կերի մեջ ընպիտակուցների խիստ ցածր տոկոսը բացասաբար է անդրադարձել նաև թոչունների մսատվության վրա։ Վիճակը բարդացել է նաև նրանով, որ ֆաբրիկայում հեղուկ վառելանյութ չլինելու պատճառով չեն գործում մեխանիզմները, տրանսպորտը։ Կուտակվել է հսկայական քանակությամբ թոչնաղբ, որն անհնար է տեղափոխել և որը կարող է վարակիչ հիվանդությունների տարածման պատճառ հանդիսանալ։

Ստեղծված դրությունից դուրս գալու ելք չգտնելով, թոչնաֆաբրիկայի ղեկավարությունը ստիպված ծայրահեղ միջոցների է դիմում։ Այդպիսի միջոց է հարկադիր մորթը։ Թե ինչի կհանգեցնի այն, դժվար չէ գուշակել, իսկ թե ո՞վ կհատուցի վնասները, կպատժվե՞ն արդյոք մեղավորները՝ առայժմ գոնե բոլորովին անհայտ է։

Վ. ՀԱՅԿՈՒՆԻ



Հանրապետության առաջատար արտադրական խոշոր ձեռնարկություններից մեկում՝ Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանում, որտեղ աշխատում է 10 հազարից ավելի մարդ, չկա աշխատանքային այն եռուզեռը, որը սովոր ենք տեսնել։ Ավելին, արտադրամասերից շատերում լռություն է։ Եվ պատճառը շրջափակումն է, որի հետևանքով ձեռնարկությանը հասցեագրված հումքն ու նյութերը չեն ստացվում, մնացել են խցանված հարևան «ինտերնացիոնալ» հանրապետության տարածքում։ Այդ պատճառով կոլեկտիվը չի կարողանում նաև պատվիրատուներին առաքել շաբաթների իր աշխատանքի արդյունքը՝ պատրաստի էլեկտրական մեքենաները։

— Մեր՝ գեներատորների հավաքման № 18 արտադրամասը մի քանի օր է, ինչ չի աշխատում։ Ամբողջ կոլեկտիվով դատապարտում ենք հարևան հանրապետության ղեկավարների ոչ մարդկային արարքը, բոլոր նրանց, ովքեր իրենց տնական լռությամբ խրախուսում են երկաթուղու շրջափակումը,— ասաց հավաքող փականագործ Աշոտ Ապրեսյանը։

ՆԿԱՐՆԵՐՈՒՄ.— Շրջափակման փաստական հետևանքները գործարանում։

Լուսանկարները՝
Ժ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ